



Տնտեսական Չարգացման և Հետազոտությունների Կենտրոն


Հարկաբյուջետային հատված. հաշիվներ և վերլուծություններ

Գագիկ Թորոսյան

Մայիսի 21, 2010

Երևան

Հանրային Հատված



Այլ կառավարական գործողություններ

- Սոցիալական և արտաբյուջետային հիմնադրամներ
 - օրինակներ՝ կենսաթոշակային հիմնադրամներ, գործազրկության հիմնադրամներ
- Կենտրոնական բանկի և այլ պետական ֆինանսական ինստիտուտների քվազի-ֆինանսական գործողություններ
 - բացահայտ կերպով չեն երևում, սակայն ազդեցություն են գործում բյուջեի վրա
 - օրինակներ՝ սուբսիդավորված փոխատվություններ Կառավարությանը, պետական կառույցներին կամ մասնավոր կազմակերպություններին



Թափանցիկության խնդիրներ

Կանխիկ և Կոտակային մեթոդներով հաշվառում

- Կանխիկ մեթոդով հաշվառումը համապատասխանում է դրամավարկային հետազոտությանը
- **Կոտակային մեթոդով** հաշվառումը համապատասխանում է NIA և վճարային հաշվեկշռին
- **Կոտակային մեթոդով** հաշվառումը չափում է Կառավարության կողմից ռեսուրսների իրական օգտագործումը
- 1986 թվականի «Պետական ֆինանսների վիճակագրությունը» (GFS) իրականացնում է կանխիկային հաշվառում, որը կենտրոնանում է Կառավարության լիկվիդային կարիքների վրա
- Վերանայված 2001 թվականի «Պետական ֆինանսների վիճակագրություն» (GFS) հիմնված է Կոտակային մեթոդի վրա և ներկայացնում է այլընտրանքային ֆինանսական իրավիճակի չափորոշիչներ և կայունության ցուցանիշներ, սակայն հաշվի է առնում նաև Կանխիկի մեթոդը
- ԱՄՆ «Պետական ֆինանսների վիճակագրություն» ձեռնարկ (1986, 2001)


<http://www.imf.org/external/pubs/ft/gfs/manual/index.htm>

Բյուջեի ստանդարտ ձևաչափ (հին, 1986 GFS)

- Եկամուտներ և դրամաշնորհներ
 - հարկային եկամուտներ
 - ոչ հարկային եկամուտներ
 - դրամաշնորհներ
- Ծախսեր և զուտ փոխադրություններ
 - ընթացիկ ծախսեր
 - կապիտալ ծախսեր
 - զուտ փոխադրություններ (սոր GFS-ն ընդգրկում է ֆինանսավորման մեջ)
- Ֆինանսավորում
 - արտաքին (զուտ)
 - ներքին
 - բանկային (զուտ), ոչ բանկային (զուտ)

Հիմնված է
կանխիկի մեթոդի
վրա, հետևաբար
չվճարված
պարտավորություն
ները
բացակայում են !

Բյուջեի նոր ձևաչափ, հաշվեկշիռ (2001 GFS)



Պետական Ֆինանսների հաշվառման հիմնական տարրերը

Եկամուտներ և դրամաշնորհներ

Ծախսեր

Դեֆիցիտի ֆինանսավորում

Եկամուտներ և դրամաշնորհներ

- Եկամուտներ. բոլոր անհատույց մուտքերն են (այսինքն, այն մուտքերը, որոնք հետագա վճարման պարտավորություններ չեն առաջացնում),
 - հարկային եկամուտներ - պարտադիր և անհատույց վճարներ են, որոնք հավաքագրվում են Կառավարության կողմից **հանրային** ծախսեր իրականացնելու նպատակներով
 - ոչ հարկային եկամուտներ - ներառում է պետական կազմակերպությունների գործառնական ավելցուկը, ԿԲ-ի շահույթը, կապիտալից եկամուտ, կազմակերպչական վճարներ, գանձումներ և տուգանքներ,
- դրամաշնորհներ. այլ երկրներից կամ միջազգային կազմակերպություններից անհատույց մուտքեր

Ծախսեր

- Պետական ֆինանսաների վիճակագրության համակարգում հիմնականում օգտագործվում է ծախսերի հետևյալ դասակարգումները՝ ***տնտեսագիտական, գործառնական և գերատեսչական***.
- Ծախսերի տնտեսագիտական դասակարգումը հիմնված է գործարքների օբյեկտի վրա:
- **Գործառնական** դասակարգումը ցույց է տալիս այն նպատակը կամ գործառույթն, որի համար կատարվում են ծախսերը՝ առողջապահություն, կրթություն, պաշտպանություն – այլն:
- **Տնտեսագիտական** դասակարգման առաջին սկզբունքը գործարքների տարբերակումն է ***փոխանակայինի*** (երկկողմանի կամ բազմակողմանի) **և տրանսֆերտայինի** (միակողմանի):
- Փոխանակային գործարքների օրինակներ են աշխատավարձը, ապրանքների և ծառայությունների ձեռքբերումը, տրանսֆերտային են՝ գրանտները, սուբսիդիաները և այլն:

Ծախսեր. տնտեսագիտական դասակարգում

- **Ընթացիկ** - աշխատավարձ, ապրանքներ և ծառայու-թյուններ, տոկոսադրույքների վճարում, սուբսիդիաներ և ընթացիկ տրանսֆերտներ,
- **Կապիտալ** - հիմնական միջոցների ձեռքբերում (պետական ներդրումներ), կապիտալ տրանսֆերտներ,
- **Չուտ փոխատվություններ** (փոխատվություններ հանած ստացված վճարումներ) և հանրային քաղաքականության նպատակների իրականացման համար կատարված փոխատվություններ:
- Նոր GFS ձեռնարկը այլ կերպ է սահմանում զուտ փոխատվությունը և դասակարգում է այն որպես *ֆինանսավորման* մաս

Բյուջեի պակասուրդ/դեֆիցիտ (1)

- Այն դեպքում, երբ ծախսերը գերազանցում են եկամուտների մակարդակը, առաջանում է բյուջեի պակասուրդ, որը պետք է ֆինանսավորվի ներքին և արտաքին աղբյուրների հաշվին:
- Պակասուրդը ցույց է տալիս պետական հատվածի փոխառության պահանջը:
 - Ճիշտ է երկարաժամկետ հատվածում պետությունը պետք է աշխատի ունենալ հաշվեկշռված բյուջե, սակայն կարճաժամկետում հաճախ անհրաժեշտություն է առաջանում ունենալ բյուջեի պակասուրդ, երբեմն էլ ավելցուկ: Հարցն այստեղ կայանում է ոչ թե պակասուրդին դրական կամ բացասական գնահատական տալու մեջ, այլ դրա՝ որպես տնտեսագիտական կատեգորիայի ուսումնասիրության և վերլուծության մեջ:

Բյուջեի պակասուրդ/դեֆիցիտ (2)

- Բյուջեի պակասուրդը ցույց է տալիս պետական հատվածի խնայողությունների և ներդրումների տարբերությունը:
- Ընդհանուր սահմանամաբ խնայողությունները համախառն տնօրինվող եկամտի և ընթացիկ ծախսերի տարբերությունն են:
- Այդ դեպքում պետական հատվածի համար կստանանք՝
 - Պետական հատվածի համախառն տնօրինվող եկամուտը = հարկային եկամուտներ + զուտ գործոնային եկամուտ (ոչ հարկային եկամուտներ - ներքին - արտաքին տոկոսավճարներ) + զուտ տրանսֆերտներ (ստացված պաշտոնական տրանսֆերտներ - վճարված տրանսֆերտներ)
 - Պետական հատվածի խնայողությունները = համախառն տնօրինվող եկամուտ և պետական գնումներ (աշխատավարձ + ապրանքների և ծառայությունների ձեռքբերում)

Բյուջեի պակասուրդ/դեֆիցիտ (3)

- **Առաջնային** (անտոկոս) պակասուրդը չափում է ընթացիկ դիսկրեցիոն* հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը՝ բացառելով տոկոսավճարները պակասուրդի մեծությունից: Պակասուրդի այս տեսակը ցույց է տալիս, թե որքանով են կառավարության ընթացիկ հարկաբյուջետային
- գործառնություններն ազդում կառավարության զուտ պարտքի վրա: Այն կարելի է ներկայացնել հետևյալ բանաձևով՝

Առաջնային պակասուրդ = Պակասուրդ - արտաքին և ներքին տոկոսավճարներ

Բյուջեի պակասուրդ/դեֆիցիտ (4)

- Գործառնական պակասուրդը կարելի է ներկայացնել որպես պակասուրդի – տոկոսավճարների սղաճային բաղադրիչի տարբերություն կամ, որը նույնն է, առաջնային պակասուրդի – տոկոսավճարների իրական բաղադրիչի գումար: Սղաճը նվազեցնում է պետական պարտքի չմարված մասի իրական արժեքը, թե՛ վարկատուները փոխհատուցում են այն ավելի բարձր անվանական տոկոսադրույքների միջոցով:
- Գործառնական պակասուրդի գաղափարը լայնորեն տարածված է բարձր սղաճ – մեծ պետական պարտք ունեցող երկրներում, քանի որ այն չափում է, թե որքանով է տվյալ տարվա հարկաբյուջետային քաղաքականությունն ազդում պետական պարտքի իրական մեծության վրա:

Գործառնական պակասուրդ = Պակասուրդ - Տոկոսավճարների սղաճային բաղադրիչ,
կամ՝

**Գործառնական պակասուրդ = Առաջնային պակասուրդ +
Տոկոսավճարների իրական բաղադրիչ**

Բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման եղանակները

- Բյուջեի պակասուրդի մակրոտնտեսական ազդեցությունը մեծ մասամբ կախված է դրա ֆինանսավորման ուղիներից:
- Գոյություն ունեն պակասուրդի ֆինանսավորման հետևյալ չորս աղբյուրները՝
 - փոխառություններ կենտրոնական բանկից (պակասուրդի «մոնետարիզացիա»),
 - փոխառություններ առ-տրային բանկերից,
 - փոխառություններ ներքին ոչ բանկային համակարգից,
 - արտաքին փոխառություններ:
- Ընդհանուր դեպքում, ֆինանսավորման յուրաքանչյուր տարատեսակը կապված է մակրոտնտեսական անհաշվեկշռվածության որոշակի ձևի հետ:

Պետական գործառնություններն ըստ Նոր (2001) GFS ձեռնարկի

Ա. Չուտ **եկամտի**

վրա ազդող գործարքներ.

եկամուտներ -
ծախսեր = **համախառն/
զուտ հաշվեկշիռ**

Բ. Ոչ ֆինանսական ակտիվներով
գործարքներ.

Ոչ ֆինանսական
ակտիվների զուտ
ձեռքբերում

Գ. Չուտ փոխատվություն/
փոխառություն ` Ա.- Բ.

Դ. Ֆինանսական ակտիվների և
պարտավորությունների հետ
գործարքներ

- քաղաքականության
նպատակներ
- լիկվիդայնություն
- հետաձգված պարտավորու-
թյուններ / պարտքի վերակա-
ռուցում

Պետական ֆինանսների վերլուծություն. հիմնական սկզբունքները

- Ֆինանսական գործունեության չափումը/ գնահատումը
 - Ֆինանսական հաշվեկշիռ
 - Ֆինանսական կայունություն
- Բյուջեի ֆինանսավորման այլընտրանքային եղանակների **ներմուծում**
- Եկամուտների վերլուծություն
- Ծախսերի վերլուծություն

Ֆինանսական հաշվեկշռի չափումը. այլընտրանքային սկզբունքներ

- **հաշվեկշռի ընդունված ձև՝** կանխիկ եկամուտներ և դրամաշնորհներ՝ *հանած* ծախսերը
 - բացահայտում է ֆինանսական կարիքները, անտեսում է հետաձգված պարտավորությունները
- **Նախնական հաշվեկշիռ՝** եկամուտներ և դրամաշնորհներ՝ *հանած* ծախսերը, բացառությամբ տոկոսադրույքների
- արտացոլում է «նոր» ֆինանսական գործառնությունների արդյունքները
- կարևոր է ֆինանսական կայունության չափման տեսանկյունից
- **Կուտայաին հաշվեկշիռ** (նոր GFS՝ արտացոլում է հետաձգված պարտավորությունները)

Ֆինանսական կայունություն

- ցույց է տալիս, թե որքանով են ընթացիկ հարկերը և ծախսային քաղաքականությունները համաձայնեցվում միջժամանակային բյուջետային սահմանափակումների հետ
- ֆորմալ կերպով ասված՝ ցույց է տալիս, թե արդյոք նախագծված սկզբնական ավելցուկի ներկա արժեքը բավարար է պարտքը ծածկելու համար
- Պետական պարտքը կայուն է, երբ պետությունն ի վիճակի է շարունակել սպասարկել պարտքն առանց իր ապագա եկամուտները կամ նախնական (ոչ տոկոսադրույքային) ծախսային վարքագիծը անիրատեսական չափերով փոփոխելու
- Պարզ ցուցանիշ՝ **պարտք/ ՅՆԱ-ի** մեծությունը և աճը

Եկամուտների վերլուծություն

- Ընդհանուր կատարումը
 - Եկամուտ/ՋՆԱ և Ջարկեր/ՋՆԱ հարաբերակցությունները
 - արդյոք եկամուտները համաչափորեն են «շարժվում» տնտեսության հետ
- Էլաստիկություն. հարկահավաքման աճ՝ ճշգրտված հարկերի չափորոշիչների համար՝ հարաբերած հարկման բազային (AT)
AT-ի հաշվարկներն առաջացնում են հոմոգեն շարքեր՝
$$\varepsilon = \% \Delta AT / \% \Delta TB$$

Ծախսերի վերլուծություն

- ծախսերի կազմը և կառուցվածքը
- ծախսեր/ ՅՆԱ հարաբերակցություն. ընդհանուր, ընթացիկ, կապիտալ, տոկոսադրույքի վճարում
- արտարժույթի փոխանակման կուրսի և տոկոսադրույքների ազդեցությունը ծախսերի վրա
- «արդյունավետ» և «ոչ արդյունավետ» ծախսեր